Գ.

ԱՂՋՈՑ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ

Գեղարդից ոչ հեռու, դէպի հարաւ, լերան հարաւային գեղատեսիլ լանջին՝ Գառնիից և Հաւուց Թառից դէպի արևելք, Ելլիջա գիւղի մօտ, ընկած է այդ վանքը։ Ըստ աւանդութեան, ինչպէս և մեր հին վանքերից շատերի համար է ասուած, հիմնուած Գրիգոր Լուսաւորչի ձեռքով, Հռիփսիմեանց քահանաներից մէկի՝ Ստեփանոսի անունով, որ փախել էր Տրդատի հալածանքներից և նահատակուել այդտեղ. «Եւ մի զԲարուսին հողն ի Հռոմա Աղջոց վանացն» (Յաւել. Ա. 121)։ Վերջապէս այդ անունով յիշատակւում է նաև Վարդանի Աշխարհացոյցի մէջ իբրև Գառնոյ շրջանի վանքերից մէկը. «և Աղջոց վանքն, ուր կա սբ. աջն Ստեփանոսի քհնյին. և սբ. աջն Արիստակիսի որդոյն Գրիգորի Լուսաւորչի»(*)։

Սակայն վանքի շինութիւնը Յայսմաւուրքի յայտարարած հնութեան ոչ մի նշան չունի. նա Զաքարոմն ի քհնյիցն Ստեփանոս անուն անկաւ փախստական ի լեառն Գառնոյ և անդ կեցեալ կարցւ. ի քս. և թաղեցաւ ի տեղոջն։ Եւ յետոյ սրն. Գրիգոր ազգմամբ հրշտկ. արր. զտեղին վանք միաբանակեցաց, որ է մինչև ցայսօր և կոչի Աղջոց վանք, այս է աղջկանց վանք։ Եւ զանունն ևս ուսաւ ի հրեշտակէն սրն. Գրիգոր Ստեփանոս գոլ. վս. որոյ ասի Աղջոց վանուց սբ. Ստեփանոս»(*)։

Պատկեր 177.

Արձանագրութիւններից մէկի մէջ ևս երևում է վանքի անունը. «Ես Գրիգոր որդի Աբիսալին տվի եանց շրջանի մի շէնք է, նոյն ժամանակին յատուկ բոլոր ճարտարապետական նշաններով և արձանագրութիւններով։ Վանքը բաղկացած է երեք մասից, տաճարը իւր գաւթով (պատկ. 19) և ապա հիւսիսային կողմից Պօղոս և Պետրոս առաքեալների անունով փոքրիկ եկեղեցին. առաքեալների հարթաքանդակներն էլ զարդարում են արևմտեան դրան երկու կողմերը (պատկ. 25), թէև վիմական և ձեռագրական յիշատակարանների մէջ այդ անունով եկեղեցի չէ յիշուած։ Առաջին պատկերը տալիս է մեզ եկեղեցիների արևմտեան տեսարանը. տաճարի գմբէթն ընկած է, մնացած է միայն թմբուկի հիմքը. կործանուած է

(*) Յայսմաւուրք։ Վանքի անուան նուիրուած է և յատուկ շարական նոյն աւանդութեան ակնարկներով, հեղինակն անյայտ։ Ամատունի, Պարականոն շարականներ. 1911. 164։ Ձեռ. Էջմ. № 1588. 200ա.։

(*) Ձեռ. Էջմ. № 358 նժ. (Լիմ). Նաև № 2179/2166։